

## ԵԿՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ \*

### I

Ահա երկրորդ ամիսն է, ինչ պատերազմի խարոյին է վառուած երկրագնդի տարբեր վայրերում։ Զը տեսնուած արագութեամբ Եւրոպական պետութիւնները միմեանց պատերազմ յայտարարեցին. ստացուեց կոուողների երկու խոշոր բանակ. մէկ կողմում Աւստրօ-Հունգարիան իւր զինակից Գերմանիայի հետ, իսկ միւս կողմում՝ Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան և Սերբիան։ Եյս երկրորդ խմբակցութեան ակամայ միացաւ և Բելգիան, որին Գերմանիան առաջարկել էր՝ թոյլ տալ նրա երկրի միջով գերմանական զօրքը Փրանսիայի սահմաններին մօտեցնել, որպինետեւ բելգիական-ֆրանսիական սահմաններն աւելի անպաշտպան և զուրկ են ամրութիւններից, քան գերման-ֆրանսիական սահմանը։ Բելգիան մերժեց այդ առաջարկն և դժբախտաբար առաջին հարուածները ստացաւ Գերմանիայից, զրկուելով իւր մի շարք քաղաքներից, որոնց թուում և Լիէժն ու Բրիւսելը (Բելգիայի մայրադադարը)։ Եւրոպական միւս չեղոք պետութիւնների զիրքը գեռ ևս անորոշ է. նրանցից մի քանիսը սպասողական զիրք են բռնել և աչալուրջ հետեւում են պատերազմական գործողութիւններին որոշելու իրենց անելիքը։ Եւրոպական պատերազմողներին յետեւեց և Եապոնիան, արևելեան Ասիայի այդ ուժեղ թագաւորութիւնը, որ նոյնպէս տրամադիր էր մենամարտելու և նոր հողեր զրաւելու։ Եապոնիան արդէն պատերազմ է յայտարարել Գերմանիային, նախապէս ստանալով Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների

\* ) «Աբարատ»ի սոյն համարից սկսած հետզետէ կը տանք ընթերցողներին Եւրոպական պատերազմի ընթացքի մասին ընդհանուր և էական տեղեկութիւնների

կառավարութեան համաձայնութիւնը և գոհացում տալով նրան, որ չը միջամտէ ծագելիք բարդութիւններին: Օքչցօր սպասում ենք, որ մի ուրիշ պետութիւն ևս գլուխ կը բարձրացնէ և մասնակից կը լինի այս համաշխարային ողբերգութեանը:

Այսպիսով մենք ականատես ենք մեծ և պատմութեան մէջ չտեսնուած պատերազմի սկզբնաւորութիւնը, որ թերևս դարագլուխ լինի յետագայ շրջանների համար: Աշխատենք համառօտ կերպով բացատրել թէ առնասարակ պատերազմները իրականապէս ի՞նչ դրդապատճառներից են առաջ դալիս:

## II

Ազգերն և պետութիւնները իրենց միջազգային յարաբերութիւնների ժամանակ ղեկավարում են համաշխարհային քաղաքականութեամբ. այդ քաղաքականութիւնը սկիզբն է առնում հին զարերից, հիմնուած է ներկայի մատեսական և առևտրական պայմանների վրայ և ուղղուած է դէպի հեռաւոր ապագայի հեռանկարները: Անհատները մի մի հիւլէ են համաշխարհային քաղաքականութեան մէջ և անզօր են որ և է կերպ փոխել կամ այլ ուղղութիւն տալ այդ քաղաքականութեանը: Այսօրուայ պատերազմը համաշխարհային քաղաքականութեան մի անեղ ալիքն է, որի մէջ խեղդուում են Վիլհելմներն ու Ֆրանց—Ֆերդինանդներն, անհատներն միախառնուել են ազգերի և պետութիւնների գանգուածին, հեղուկացել և հալուել են ընդհանուր տրամադրութեան մեծ ալիքի մէջ: Պատերազմները՝ թշնամի բանակի զօրքի և նաւատորմիզի ոչնչացումն, ցաւալի, բայց համաշխարհային քաղաքականութեան նպատակների իրագործման էական և կտրուկ միջոցն է: Պատերազմները միջազգային յարաբերութիւնների նախադիրներն էն, որոնց հետեւմ են նոր յարաբերութիւններ, նոր պայմաններ և նոր բարեկամութիւն: Հեռաւոր երկրներում գաղութներ ձեռք բերելու ձգումները, զօրքի և նաւատորմիզի ուժեղացնելը և նոր

ռազմական ձևեր հնարելը և կատարելագործելը՝ այս կամ  
այն իշխանի քմահաճ ցանկութեան հետևանքը չեն՝ այլ  
երկրի ազգաբնակութեան և արդիւնագործութեան զար-  
գացման անհրաժեշտ միջոցները, նոր շուկաներ և նոր հայ-  
րենիքներ գտնելու օժանդակ պայմանը։ Երբ մի երկրի  
ազգաբնակութիւնը չի տեղաւորում իւր հայրենիքում և  
երբ այդ երկրի գործարանների արտադրած արդիւնքնե-  
րը ամբողջապէս չեն սպառում ներքին շուկաներում—  
այն ժամանակ անհրաժեշտութիւն է զգացւում նոր հողեր  
զբաւել՝ ազգաբնակութեան համար, և նոր շուկաներ զբա-  
նել։ Գերմանիան մի երկրի է, որի թէ ազգաբնակութիւնն  
է շատ, որի պատճառով և տարբեր ժամանակներ այն-  
տեղից գաղթականներ են գնացել բազմաթիւ խմբերով,  
որոնցից միքանիւն էլ ի միջի այլոց եկել են Կովկաս, հիմ-  
նել են գերմանական կօլօնեաներ—գիւղեր (Գանձակի և  
Թիֆլիսի նահանգներում), և թէ արդիւնագործութիւնն է  
զարգացած. հողի պակասութեան պատճառով աշխատող  
ձեռքերի մեծ մասը մտել է գործարանները, վերջինների  
արտադրութիւնը զարգացել է մեծ չափերով. շուկայ է  
պէտք, որ այդ գործարանների պատրաստած ապրանքնե-  
րը ծախուեն, իրենց—Գերմանիայում եղած ներքին շու-  
կաները, բաւական չեն, սպառողները բիշ են, քան ար-  
տադրողները, պէտք է, որ գերմանական գործարանատէրը՝  
կապիտալիստը իւր ասլրանքներն ուղարկէ ուրիշ երկրներ—  
Ասիս (Զինաստան) և Աֆրիկայի ներսը, որպէսզի այն-  
տեղ ծախուի—այնտեղ շուկաներ գտնեն. Ազգաբնակու-  
թեան աճեցողութեան դէպքում այնքան էլ դժուար չէ  
նոր երկրներ տիրելը, եթէ տիրողը աւելի քաղաքակիրթ է.  
անցեալում շատ են օրինակները, երբ առանց պատերազ-  
մի փողը հնչեցնելու զրաւել են ամբողջ նահանգներ և  
գաւառներ։ Երբեմն էլ առանց նոր երկիր նուաճելու ժո-  
ղովուրդը ինքը գտնում է մի ելք, մասնակի գաղթակա-  
նութիւններ են սկսում դէպի Ամերիկա կամ դեռևս նոսր  
Բնակուած երկրներ. մեծ արգելքների չեն հանդիպում այս  
պիսի գաղթականութիւնները։

Աւելի դժուարը արդիւնաբերութեան հարցն է։ Պետութիւններն մի շարք առևտրական պայմանագրերով փակել են իրենց երկրի շուկաները օտար պետութեան ապրանքների առաջ։ սաեղծուած են մաքսեր և ուրիշ շատ արգելվներ։ իւրաքանչիւր պետութիւն ցանկանում է իւր երկրի արդիւնաբերութիւնը զարգացնել, դրա համար նաթոյլ չէ տալիս, որ հարեան պետութեան ապրանքները ծախուեն իւր երկրի շուկաներում, իսկ իրենը մնայ առանց սպառումի, դրա համար նա արգելվ է դնում օտար պետութեան ապրանքներին, կամ այնքան մեծ մաքս է դնում նրանց վրայ, որ գինը բարձրանում է շուկայում, իսկ իր երկրի ապրանքները, որոնք ազատ են մաքսից և էժան են, աւելի են ծախուում, քան օտար ապրանքը։ Շուկայի գերը այժմս շատ մեծ է. շուկան այն հանգոյցն է, որ իւր մէջ է կենդրոնացնում տնտեսական կեանքի բոլոր թելերը, շուկան է զեկավարում արդիւնաբերութիւնը, և ոչ թէ արդիւնաբերութիւնը՝ շուկային։ Այս տարուայ օգոստոսի սկզբին մենք իմացանք, ինչպէս Անգլիան ձեռք է բերել նոր շուկաներ, պատերազմի հենց սկզբի օրերում գրաւել է Գերմանիայի մի երկու գաղութներն և այդ գաղութներում ծախուող գերմանական ապրանքների նմուշներն ուղարկել է Լոնդոն՝ որպէսզի Անգլիական գործարաններն զբանց նման ապրանքներ արտադրեն և նոր գրաւած շուկաներում ծախեն։

## III

Մենք տեսանք, թէ ինչ նշանակութիւն ունեն շուկաները երկրի արդիւնաբերութեան զարգացման համար։ Ասիական ընդարձակ շուկաները նապօքօնի անկումով և Հօլանդիայի թուկանալուց յետոյ անցան Անգլիային։ Բայց առևտրի և արդիւնաբերութեան անընդհատ զարգացմանք վերջին տասնամեակներում սկիզբն առաւ համաշխարհային քաղաքականութեան նոր ալիքը, որ պայմանաւորուում է երկու հանգամանքով, նախ՝ արդիւնաբերութեան զարգացումը մինչև այժմս անշարժ մնացած երկրներում։ (Գեր-

մանիա, Ետաղօնիա և այլն) և երկրորդ՝ ազատ մուտքի պահանջը արտաքին նոր շուկաներ։ Դեռ Բիսմարկի օրով Գերմանիան հարկ զգաց նոր շուկաներ գտնելու, և այդ ժամանակից էլ պատրաստուեց մի Եisen ուն Բլու—երկաթով ու արխիմով ճանապարհ բանալ իւր արդիւնաբերութեան. սկիզբ զբուեց գերմանական զաղութիւներին, որոնք պէտք է նոր և նոր շուկաներ ձեռք բերէին ապագայում, մրցէին Անգլիայի հետ և գրաւէին նրա շուկաները։ Ահա այս հողի վրայ մշտական անախորժութիւններ էին ծնուռում. և պարզ էր, որ Անգլիան և Գերմանիան մի օր իրար դէմ են դուրս գալու՝ դէնքով մաքրելու իրենց հաշիւները։ Եկաւ այդ օրը, բայց և բերեց նոր հանգամանքներ ու բարդութիւններ։ Պարզէնք դրութիւնը։

Սացինք, որ գերմանական գործարաններն արտադրում էին այնքան շատ արդիւնքներ, որ ամբողջապէս ներքին շուկաներում չէր ծախուռում. ընթերցողը կարող ասել, թէ թող քիչ արտադրեն, այնքան, որքանի պահանջը կայ իրենց երկրի շուկաներում։ Բայց այստեղ պէտք է աչքի առաջ ունենալ այն մղիչ պատճառները, որոնք ստիպում են գործարանային արդիւնաբերութեան զարգացմանը։ Միայն այն փաստը, որ մի որ և է մարդ կամ երկիր արդիւնաբերում է մի որ և է աօլրանք՝ ցոյց է տալիս, որ այդ մարդը կամ երկիրը ինքը կարիք ունի ուրիշ ապրանքների, որ նա անբաւարարուած է իւր սեփականով և ցանկանում է իւր արտադրածով փոխարինել իւր ցանկացածը։ Այլապէս ինչու պէտք է նա արտադրէ։ Անգլիան, որ ներկայիս ամենազարդարացած արդիւնագործական երկիրն է, ինքը պահանջ ունի հացահատիկների, բրդի և այլ նույն նիւթերի, որոնք և ստանում է իւր զաղութիւններից։ Գերմանիան էլ պահանջ զգաց հացահատիկների և այլ ապրանքների, որոնք միայն դրսից կարող է ստանալ։ Բայց զնելի անհամեմատ աւելի հեշտ է, քան ծախելը. օտար կապիտալիստի շուկայ պատրաստելն աւելի զիւրին է, քան օտար երկրում իրեն համար շուկայ գտնելը։ Եւ ահա—միջազգային յարաքերութիւններն այնպէս

էին բարդուել, որ գժուարացել էր ծախելը և գնելը, և պէտք էր մի չնչին առիթ, որ այդ բարդուած յարաբերութիւններն ու ատելութեամբ լցուած մթնոլորտը պայթէր: Եկաւ և չնչին առիթը:

## VI

Այս մեծ պատերազմի բանկման եթէ ոչ զբգապատճառը՝ գոնէ արագացնողն եղել է մի պատանի, 16 տարեկան աշակերտ Գաբրիէլ Պրինցիպը, նա ատրճանակի երկու գնդակով յունիսի 14ին սպանել է Աւստրօ-Հունգարիայի թագաժառանգ՝ Ֆրանց-Յերղինանդին և նորա ամուսնուն, երբ սրանք կառքով անցնուամ էին Բօնիայի Սարահօ քաղաքի փողոցով: Աւստրօ-Հունգարիան ողբաց իւր թագաժառանգի մահը և ցանկացաւ վրէժ լուծել ու մի ամսուայ սուզից յետոյ, յուլիսի 15-ին պատերազմ յայտարարեց Սերբիային, ինչու Սերբիային, կը հարցնէ ընթերցողը, որովհետև սպանողը՝ աշակերտը, թէև աւստրօնպատակ էր, բայց ազգով սերբ էր, սերբերը վերջին տարիներս ատելութեամբ էին լցուած դէպի աւստրիացիք, որովհետև վերջինս առանց աղմուկի և մի կաթիլ արիւն թափելու ներս էր խուժել Բօնիա և Հերցեգովինա սերբիական գաւառներն ու գրաւել<sup>1)</sup>):

Աւստրիան ցանկանում էր ոչնչացնել Սերբիային, Ռուսաստանը, որ գեռ հին ժամանակներից պաշտպան է հանգիսացել ոլաւոն թոյլ ազգութիւններին, այս անզատ էլ նախ ամեն խաղաղ միջոցի դիմեց, որպէսզի պատերազմի ուրուականը վերանայ մէջ տեղից, բայց երբ Աւստրիան չը լսեց—զօրաժողով յայտարարեց. Գերմանիան մէջ ընկաւ և տեսնելով, որ հասել է իւր նպատակների իրազործման յարմար ժամը (արտաքին շուկաներ դըտ-

1) Բօնիայի և Հերցեգովինայի գրաւման պատճառներն էլ բարդ են. զլիաւորը այն էր, որ Աւստրիան ցանկանում էր ծովի վրայ ևս իշխանութիւն ունենալ, նաւատորմիդ պահել, գաղութներ հիմնել, իսկ դրա համար պէտք էր գրաւել մինչև ծովը տանող ցամաքը: Գ. Տ. Ռ.

նել, նոր երկըներ գրաւել) յուլիսի 19-ին պատերազմ յայտարարեց Ռուսաստանին, մի օր յետոյ յարձակուեց Հուկումբուրգի և Բելղիայի վրայ, որոնք չեղոք երկիրներ էին. իսկոյն Ֆրանսիան և Անգլիան պատասխանեցին նրան և պատերազմ յայտարարեցին Գերմանիային ու Աւստրօ-Հունգարիային, այս վերջինս դեռ ինքը մի երկու օր առաջ պատերազմ էր սկսել ոռուսների դէմ Այժմս էլ արդէն Եապօնիան է պատերամ յայտարարել Գերմանիային. այսպիսով մեծ արագութեամբ տարածուեց պատերազմի հրդեհը. Այդ բոնկման գործում մեծ դեր ունի վաճառականութեան համար նոր շուկաներ ձեռք բերելու ցանկութիւնը յանձին Վիլհելմի, իսկ Վիլհելմը, ինչ պէս սրամիտ կերպով նկատել են Գրանսիական թերթերը, — գերմանացի կապիտալիստների կօմի-վօյաժօրն է, գերմանական վաճառականութեան համար շուկաներ փնտուզն է:

## VI

Մենք, XX-րդ դարում ապրողներս, որ գարերի հըսկայ մեծութեան մէջ մի հիւլէ ենք, անկարող ենք կապիտալիզմի զբոհին պատճէց դնել և շուկաների ու գործարանների համար մղուած այս պայքարը ի չիք գարձնել. մեզ մնում է միայն մեզմացնել այդ զբոհին ու պայքարին գոհ գնացած անձանց դժբախտ ընտանիքների գառնութիւնները, միիթարել, որդեզուրկ մօր արցունքն սրբել, բժշկել վիրաւորուածին, օգնել անընկեր և անպաշտպան մնացածներին.